Հավելված 2

Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
11 հունիսի 2024 թվականի N 199 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հունիսի 12-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am ասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33, (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

ՈՍԿՈՒ ԳՐԱՎՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ-IDGOLD

Ընդհանուր պայմաններ

	1. ՈՍԿՈՒ ԳՐԱՎՈՎ ՎԱՐԿԵՐ			
1.	**Ոսկու գնահատման սակագին**	համաձայն ոսկու գրավով վարկերի փաթեթի համար հաստատված սակագների		
2.	**Մարման եղանակ**	անուիտետային		
3.	**Արժույթ**	ՀՀ դրամ		
4.	**Վարկի նվազագույն գումար**	300,000 ՀՀ դրամ		
5.	**Վարկի ժամկետ (ամիս)**	36 – 60		
6.	**Տարեկան անվանական տոկոսադրույք**	վարկ գրավ հարաբերակցություն գործակից /Վարկի ժամկետ (ամիս)	36	37-60
		Մինչև 70%	14.5%	15.5%
		71% – 90%	16%	16.5%
		91%-100%	17%	
7.	**Տարեկան փաստացի տոկոսադրույք**	15.54% -22.31%		
8.	**Այլ պայմաններ**	համաձայն Բանկում գործող Ոսկու գրավով ապահովված վարկերի տեղեկատվական ամփոփագրի անուիտետային մարման եղանակով վարկերի պայմանների		
9.	**Փաթեթի շրջանակներում ոսկու գրավով վարկ ստացող հաճախորդներին լրացուցիչ հնարավորություն է տրվում Բանկից ձեռք բերել ոսկու ստանդարտացված ձուլակտոր/ներ/՝ ի ապահովումն տրամադրվող վարկի գրավադնելու և դրա դիմաց լրացուցիչ տրամադրվելիք վարկի գումարը ոսկու ստանդարտացված ձուլակտորի արժեքի վճարմանն ուղղելու պայմանով:**			
10.	Ոսկու ստանդարտացված ձուլակտորների ձեռքբերման և գրավադրման արժեք	Բանկի կողմից հրապարակված տարաժամկետ վճարմամբ ոսկու ստանդարտացված ձուլակտորի վաճառքի գին:		

11.	Հաճախորդին առաջարկվող/հասանելիք ոսկու ստանդարտացված ձուլակտորի առավելագույն քաշը	Հաճախորդին առաջարկվող/հասանելիք ոսկու ստանդարտացված ձուլակտորի առավելագույն քաշը կախված է հաճախորդի Բանկում գործող և հաստատված /տրամադրվելիք/ ոսկու գրավով ապահովված վարկերի մնացորդների հանրագումարից, ստորև ներկայացված չափերով. • Մինչև 499,999 ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ առավելագույնը 5 գրամ • 500,000-1,500,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում՝ առավելագույնը 10 գրամ • 1,500,001 ՀՀ դրամ և ավելի վարկերի դեպքում՝ առավելագույնը 20 գրամ
	2. ROCKET LINE[1]	
12.	**Վարկի առավելագույն գումար**	ոսկու գրավով վարկի 10%-ի չափով, նվազագույնը 10 000 ՀՀ դրամ
13.	**Այլ պայմաններ**	համաձայն Բանկում գործող «ROCKET LINE վարկի/վարկային սահմանաչափի» տեղեկատվական ամփոփագրի
	3. ԴԵԲԵՏԱՅԻՆ ՔԱՐՏ	
14.	**Քարտատեսակ**	**Visa Gold**
15.	**Քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար**	50% զեղչ Բանկում գործող սակագնից սահմանված՝ «Դեբետային վճարային քարտերի» տեղեկատվական ամփոփագրում Եթե հաճախորդը արդեն իսկ ունի նշված քարտատեսակից, ապա փաթեթի շրջանակներում նոր քարտ չի տրամադրվում:
16.	**Այլ պայմաններ**	համաձայն Բանկում գործող «Դեբետային վճարային քարտերի» տեղեկատվական ամփոփագրի
	4. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ	
17.	**Հաշվի արժույթ**	ՀՀ դրամ
18.	**Հաշվի բացում**	անվճար
19.	**Այլ պայմաններ**	համաձայն Բանկում գործող «Բանկային հաշիվների, փոխանցումների «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագների» տեղեկատվական ամփոփագրի
	5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	
20.	**Տեսակը**	Դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ կամավոր վաճառք (1-ին, 2- րդ, 3-րդ կարգի հաշմանդամություն, մահ): Ապահովագրությունն իրականացվում է փաթեթի գործողության 1-ին տարվա համար: Նոր ապահովագրական վկայագիր կարող է չկնքվել, եթե ապահովագրական վկայագրի գործողության ժամկետում. • հաճախորդին տրամադրվում է ևս մեկ ոսկու գրավով վարկ փաթեթի շրջանակներում • եթե հաճախորդը իրականացնում է վարկի վաղաժամկետ մարում և ստանում է նոր ոսկու գրավով վարկ փաթեթի շրջանակներում
21.	**Ապահովագրավճար**	իրականացվում է Բանկի կողմից

[1] ԱյԴի Բանկ ՓԲԸ-ում վարկառուի անգրավ վարկերի հանրագումարը չի կարող գերազանցել 10 000 000 ՀՀ դրամը:

22.	**Այլ պայմաններ**	համաձայն «Լիգա-Ինշուրանս» ԱՓԲԸ համագործակցության պայմանների
	6. ՀԵՌԱՎԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
23.	**Online/Mobile բանկինգ**	անվճար
	ՓԱԹԵԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ	
24.	**Փաթեթի միացման վճար**	անվճար
25.	**Փաթեթից օգտվելու ամսական վճար**	500 ՀՀ դրամ
26.	Հաճախորդի ցանկությամբ սույն փաթեթում ներառված ծառայությունները կարող են չտրամադրվել	

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հաճախորդի կողմից փաթեթից հրաժարվելու դեպքում փաթեթում ընդգրկված ծառայությունները մատուցվում են համաձայն Բանկում գործող սակագների, սույն դրույթը չի վերաբերում ոսկու ստանդարտացված ձուլակտորի ամբողջական մեկանգամյա վճարման եղանակով ձեռքբերման դեպքում բանկի կողմից հրապարակված գնին, քանի որ սույն տեղեկատվական ամփոփագրով նախատեսված եղանակով ոսկու ստանդարտացված ձուլակտորի ձեռքբերման ժամանակ կիրառվում է սույն տեղեկատվական ամփոփագրով սահմանված վաճառքի գինը:

2. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70 11 11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

3. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

4. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն՝ Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

5. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

6. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:

7. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի և Idram&IDBank բջջային հավելվածի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ